ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔ
Հեռախոս 0234-62901

ՈՐՈՇՈՒՄ

«16 » նոյեմբերի 2012թվականի N_12-Ն

«ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի 2 փետրվարի 2012թվականի N4 արձանագրությունը՝ ««Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությանը հավանություն տալու մասին» N54 արձանագրային որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ է

հաստատել Նոր կյանք համայնքի ավագանու 04.06.2010թվականի որոշմամբ հաստատված «Նոր կյանքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունը և կանոնադրության 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք /խառը/ խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության, պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:»

: Ավագանու անդամներ

կողմ 7/յոթ/ դեմ 0/զերո/ ձեռնպահ 0/զերո/

Մ. Աբրահամյան
Հ. Սմիրյան
Ա. Աբրահամյան
Ա. Դաղբաշյան
Ա. Հովհաննիսյան
Ս. Հովհաննիսյան
Ե. Տեր Նիկողոսյան

ՆՈՐ ԿՅԱՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ /Մ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ